

**ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՍՅԱԿԻ ԵՎ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Գ. Քարակերտ

29.01.2019թ

2019թվականի հունվարի 29-ին ժամը՝ 14:00-ին Քարակերտի համայնքապետարանում տեղի ունեցավ Քարակերտ համայնքի ղեկավարի 2018թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան աշխատանքային գործունեության հաշվետու ժողովը :

Մասնակցությամբ՝ ավագանու անդամների, ՀՈԱԿ-ների տնօրենների, դպրոցի տնօրենի և համայնքի բնակիչների:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում հետևյալ գործունեությունը. ըստ բնագավառների

1. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՍ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն սահմանված կարգով, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 1127 տեղեկանքներ:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՍ

Քարակերտ համայնքի 2018թվականի եկամտային մաս

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2018թ		
	պլան	փաստացի	%
1)Սեփական եկամուտներ՝	17823.2	19340.5	108,5%
2)Հողի հարկի՝	7070.0	7178.1	101,5%
3)Գույքահարկ իրավաբանական անձանցից	356.2	419.4	117,7%
4)Գույքահարկ ֆիզ. անձանցից	5900.0	6486.1	109,9%
5)Տեղական տուրքեր	400.0	518.1	129,5%
6)Վարձակալական հողերի վարձավճար	600.0	633.7	105,6%
7)Տեղական վճար	3500.0	4105.1	117,3%

Քարակերտ համայնքի 2018 թվականի ծախսային մաս /հազ. դրամ/

ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	պլան	փաստացի
1 Տեղական ինքնակառավարում		
1)Աշխատավարձ և դրան հավասար վճարներ	32002.4	22550.2
2) Էլ. Էներգիա	800.0	683.4
3) Խմելաջուր	50.0	6.2
4)Կապի ծառայություն	250.0	195.0
5)Ապահով. ծառայություն	40.0	11.0
6)Տեղեկատվական ծառայություն	244.0	120.0
7)Մասնագիտական ծառայություն	200.0	58.0
8)Մեքենաներ և սարքավորումների ընթացիկ	470.0	423.0

	նորոգում		
	9)Գրասենյակային նյութեր	800.0	295.0
	10)Տրանսպորտային նյութեր /բենզին/	1200.0	709.1
	11)Պարտադիր վճար	50.0	18.0
	12)Գույքի ձեռք բերում	655.0	655.0
2	Համայնքային այլ ծառայություններ	1450.0	564.8
3	Առողջապահություն	200.0	200.0
4	Կրթություն և գիտություն թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներ	25183.0	21153.4
5	Սոցիալական ապահովություն	6500.0	4045.0
6	Մշակույթ սպորտ և կրոն	14.980.5	12.167.7
7	Գյուղատնտեսություն, անաս. ծառայություն /անասնաբուժ.ծառայություն, Հակակարկտային կայանների լիցքավորում./	732.0	541.2
8	Աղբահանություն և սան. մաքրում		
	1)Աշխատավարձ և դրան հավասար վճարներ	3155.9	2699.9
	2)Սան. Մաքրում	1000.0	1000.0
	3)Ապահովագրական ծառայություն	60.0	54.0
	4)Պահպանման ծախսեր	480.0	450.0
	5)Տրանսպորտային նյութեր /գազի լիցքավորում/	1000.0	648.6
9	Ճանապարհային տնտեսություն (ճանապարհների ասֆալտապատում, վերանորոգում և նախագծերի կազմում)	34507.7	34219.1
10	Փողոցային լուսավորություն և էլ. վճար	1990.0	1704.8
11	Զբամատակարարում	1000.0	266.3

3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրականացվել է փողոցների ասֆալտապատման և վերանորոգման աշխատանքներ հետևյալ փողոցներում

- Չարենցի փողոցում-250գծմ երկարությամբ, 1250քմ – ընդհանուր ասֆալտապատում,
- Շիրազի Փողոցում- 160գծմ երկարությամբ, 800քմ –ընդհանուր ասֆալտապատում,
- Սևակի փողոցում- 70քմ փոսային նորոգում, և 600քմ- ընդհանուր ասֆալտապատում,
- Բաղրամյան փողոցում- 180քմ փոսային նորոգում և 450քմ –ընդհանուր ասֆալտապատում,
- Նարեկացի փողոց դաշտ գնացող 2,5կմ հատվածում` 580քմ ասֆալտապատում /փոսային նորոգում/,
- Խճապատվել է համայնքի՝ Նար-Դոս, Մ. Սարյան, Հ. Քոչար, Հ. Թումանյան, Բաբաջանյան և Բյուզանդ փողոցները (4000.0մք մակերեսով):
Փոխվել է համայնքի երկու փողոցների / Կամոյի և Հ. Շիրազ փողոցներում / ոռոգման խողովակների ոչ պիտանի հատվածները, նոր պլաստմասե խողովակներով:

4. ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը,

- Քանդված այգիների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացվել է մարզպետարան, որի վերաբերյալ տրվել է եզրակացություն,
- Իրականացվել է հիմնված այգիների վերաբերյալ ակտերի կազմում,
- Անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանման կողմից գրանցման նպատակով, քանդված և հիմնված այգիների հողատեսքերը փոփոխելու համար, քաղաքացիներին տրվել են համապատասխան որոշումներ:

5. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություններ:
- Տրվել է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

6. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության երկու մանկապարտեզների, համայնքային կենտրոնի, գրադարանի գործունեությունը:
- Համայնքային կենտրոնում գործում է տարբեր խմբակներ, մասնագիտական կողմնորոշման կենտրոն, համակարգչային սենյակ, մարզադահլիճում իրականացվում է սպորտային խմբակների պարապմունքներ (քինգ բոքս, հունահռոմեական ըմբշամարտ) որոնց շրջանակներում կազմակերպվում է սպորտային միջոցառումներ, առակա շախմատի սենյակում իրականացվում է շախմատի ուսուցում, համայնքային կենտրոնում է գտնվում գրադարանը առկա ` 6800կտոր գրքերով:
- Համայնքում գործում է երկու միջնակարգ դպրոց:
- Համայնքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո, գործում է` Գրիգոր Նարեկացու անվան հոգևոր մշակութային կենտրոնը, համայնքապետարանի կողմից, որպես ներդրում տարեկան կենտրոնին հատկացվում է` 200,0հազ. դրամ :
- Կազմակերպվել է` Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ` Հունվարի 28 (հայոց բանակի օր), Մարտի 8 (կանանց միջազգային օր) , Ապրիլի 24 (Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր), Մայիսի 1 (աշխատանքի օր), Մայիսի 9(հաղթանակի և խաղաղության տոն), Մայիսի 28(Հայաստանի առաջին Հանրապետության տոն), Սեպտեմբերի 1(գիտելիքի, գրի և դպրության օր), Սեպտեմբերի 21(անկախության օր), Հոկտեմբերի 5(ուսուցչի օր), դեկտեմբերի 31 (Ամանոր):

7. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համայնքում իրականացվում է որակյալ բուժապասարկում համապատասխան բուժանձնակազմի կողմից, Քարակերտ և Արգինա համայնքների բնակիչների համար: Բնակիչները հնարավորություն ունեն Քարակերտի բուժամբուլատորիայում, ստանալու խորհրդատվություն, անցնել ամբուլատոր հետազոտություն` հաջորդող ամբուլատոր բուժմամբ:

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեություն:
- Կայացել է թվով 5 խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստեր, ընդունվել են համապատասխան որոշումներ:
- Համայնքի թվով 131 բնակիչներին տրվել է 4.045.0հազ. դրամ սոցիալական օգնություն, նախատեսված 6.500.0հազ. դրամից:

9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություններ, հակահամաճարակային միջոցառումներ:
- Համայնքի տարածքում շահագործվում է երեք հակակարկտային կայաններ, լիցքավորման և սպասարկման համար հատկացվել է՝ 300.000դրամ:

10.

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խմելաջրի բացակայություն.
- Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում.
- Նոր աշխատատեղերի ստեղծում.
- Հակակարկտային կայանների տեղադրում.
- Ներտնտեսային ոռոգման համակարգի վերանորոգում:

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆ
2019թվական հունվարի 29
Գ. Քարակերտ